նում, որոնք համանուն գեղերը իրենց պարտզաներով ոռոգելով միանում են Ողեկին եւ ապա խառնւում Թորդումին։ Ողեկ Ջրի Աւազանը մեծ մասամբ անտառապատ է։

Թորդում վտակը Ողեկ Ջրի խառնուն-քից դէպի հիւսիս ուղղուելով՝ ձախ կողմից ընդունում է Ընկուզէք, Ջէլիա, Օշկ եւ Վանք առ–ը, որոնք իջնում են Ընկուզէք եւ Հարկեւոր լ–րից–հիւսիս–արեւմուտքից հարաւ-արեւելք ուղղութեամբ եւ թափւում են Թորդում վտակը, լճի մօտերքը, ոռոգելով համանուն գեղերը իրենց բաժանմունքներով։ Վանքը Ոշկին է պատկանում. գեղից երկու կիլոմետր հեռու է եւ իր ճարտարապետութեամբ առաջին տեղն է բռնում ամբողջ Տայոց աշխարհում, որի եօթը հրաշալիքներից մէկն է եւ ամենանշանաւորն է։ Այս վանքից ոչ շատ հեռու կան մեծամեծ դամբարաններ մատուռի նման, որոնք այժմ Թշուառ Իսլամ հասարակութեան բնակարանի են ծառայում։ Թէեւ բարբարոս ձեռքերի հետ ժամանակը քայքայել ու փշրել են սքանչելի քանդակները. բայց մնացածներն էլ արդէն ապացուցանում են, որ ժամանակին ճարտարապետները ճաշակ են ունեցել, երբեք չեն ընդօրինակել, ո՛չ միայն ուրուագիծն ու յատակագիծը, այլ նոյն իսկ ամէն մէկը ինքնուրոյն հեղինակել եւ քանդակել են դամբարանների ներքին եւ արտաքին հիւսուածոյ քանդակները։